

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԱԾԱԿԱՆԱԿԱՆ
ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ-ԴԱՐՉԱԾԱՅԻՆ ՄԻԱԿՈՐՆԵՐԻ
ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվի դարձվածքների ինքնատիպ դրսևորումներից են համեմատություն-դարձվածային միավորները (ՀԴՄ) կամ համեմատություն-դարձվածքները, որոնք «պատկերավոր համեմատություններ են և լեզվի մեջ կազմավորվել են իբրև դարձվածաբանական միավորներ ու մտել տվյալ լեզվի բառային կազմի մեջ»¹:

Պատկերավոր համեմատությունների հիմքում ընկած է երկու տարասեռ առարկաների համեմատությունը²:

Ժամանակակից հայերենի ՀԴՄ-ները կազմվում են *պես* և *նման* կապերով, ինչպես նաև *չափ*, *ինչպես (որպես)*, *ասես*, *կարծես*, *ոնց որ* համեմատական բառերով:

Հմմտ. (Հոռոմի) *պապի պես անսխալական, երդումը ջրի պես խմել, ծոխ նման, ստվերի նման հետևել, ծովի ավազի չափ, արտացոլվել ինչպես արևը մի կաթիլ ջրում, որպես երկու կաթիլ ջուր, ասես բերանից կրակ թափել, կարծես երկնքից է իջել, ոնց որ պատին ասես* և այլն:

Ներկա հոդվածում ժամանակակից հայերենի մակարդակում, համա-ժամանակյա կտրվածքով կքննենք

- ա) ածականական ՀԴՄ-ների իմաստաբանությունը,
- բ) խոսքաշարում նրանց կապակցական հնարավորությունները,
- գ) առանձին դեպքերում, միայն իբրև համեմատության եզրեր, կբերենք հատկանշային (ածականական) ՀԴՄ-ների այլալեզու համարժեքները:

Առհասարակ ԴՄ-ների բովանդակային պլանում առանձնանում են դարձվածային և քերականական իմաստները³: Ի տարբերություն ԴՄ-ների առանձին, առավել որոշակի իմաստների՝ դարձվածային իմաստը նրանց ընդհանրական իմաստն է, որով համախմբվում են ԴՄ-ները՝ հարաբերակցվելով այս կամ այն խոսքի մասին⁴:

¹ Տե՛ս. А. Г. Назарян, Образные сравнения французского языка, М., 1965, էջ 7:

² Հմմտ. Karapetian K. M., English similes, Y., 1984, էջ 11:

³ Դարձվածային և քերականական իմաստների կոդին կարևորվում է նաև դարձվածակազմի իմաստի առկայությունը (տե՛ս Л. Е.Кругликова, Структура лексического и фразеологического значения, М., 1988, էջ 5):

⁴ Հմմտ. А. Г. Гюльмагомедов, О специфике фразеологической семантики, Ростов н/Д, 1979, էջ 86, В.П. Жуков, Русская фразеология, М., 1982, էջ 144:

Այսպիսով, դարձվածային նյութի քննությունն ավելի նպատակահարմար է կատարել ըստ ԴՄ-ների՝ իմաստային —քերականական առանձնահատկություններով տարբերակված յուրօրինակ շարքերի կամ խմբերի:

Ինչպես գիտենք, ածականը բնութագրվում է հատկանշային բովանդակությամբ: Հատկանշային հասկացությունը ներառում է բազմազան նշանակություններ՝ անձի արտաքին (*գեղեցիկ-տգեղ*), ներքին (*բարի-չար*) առանձնահատկություններ, նյութական կարողության առումով մարդուն տրվող բնութագրումներ (*հարուստ-աղքատ*), առարկաների գունային (*սև-սպիտակ*), համային (*դառը-քաղցր*) և այլ հատկանիշներ, երևույթների, վերացական հասկացությունների բնորոշումներ (*պարզ-բարդ*) և այլն:

Ածականական ԴՄ-ներում ձևավորվում են իմաստային առանձին խմբեր կամ ենթախմբեր.

Անձի հատկանիշ և դրա գնահատականի բարձր աստիճան ցույց տվող ԴՄ-ներ. հմմտ. *բողկի պես առողջ, հրեշտակի պես բարի*:

Առարկայի հատկանիշ և դրա գնահատականի բարձր աստիճան ցույց տվող ԴՄ-ներ. հմմտ. *քանոնի պես ուղիղ, եղունգի չափ*:

Երևույթի, վերացական հասկացության հատկանիշ և դրա գնահատականի բարձր աստիճան արտահայտող ԴՄ-ներ. հմմտ. *կյանքի պես թանկ, մահու պես դաժան*:

Անձի հատկանիշ մատնանշող ԴՄ-ներ: Դրանք վերաբերում են մարդու ինչպես արտաքինին, այնպես էլ ներքին աշխարհին, էությանը:

ա) Անձի արտաքին հատկանիշ արտահայտող ԴՄ-ներ:

Այդօրինակ համեմատություն-դարձվածքների մեծ մասում կախյալ բաղադրիչը հանդես է գալիս հատկանիշի ակտիվացման գործառույթով սաստկական նշանակություն հաղորդելով ածական գերադաս բաղադրիչին.

հմմտ. *օժի պես սառը, հրեշտակի պես գեղեցիկ, տաշեղի նման թեթև, Աղամի չափ ծեր, սատանայի նման տգեղ, եզան պես առողջ, կոճղի նման պնդակազմ եզան պես ուժեղ, խոզի պես գեր, մեռելի պես գունատ* և այլն:

Այս և համանման բոլորը ԴՄ-ներում ածական գերադաս անդամներով նշված հատկանիշներին կարելի է հավելել «խիստ», «շատ», «չափազանց», «անչափ» և սաստկական իմաստի այլ բառեր:

Հմմտ. Նա հիշեց իրենց նշանդրեքի առավոտը, երբ սև շորեր հագած, *մեռելի պես գունատ* Արևիկը կծկվել էր ակունքի մոտի քարե նստարանին (ՍԽՀ, 586):

ԴՄ-ների թեմատիկ այս խմբում հանդիպում են նաև այնպիսի կապակցություններ, որոնցում չկան գերադաս և սպասարկու բաղադրիչներ.

հմնտ. *վարդի պես* (շատ գեղեցիկ), *կմախքի պես* (չափազանց նիհար), *ինչպես մի պատկեր* (անչափ գեղեցիկ), *Քաբոսայի նման, սարի պես* (1. հաղթահանակ, 2. շատ պնդակազմ) և այլն:

հմնտ. Մին էլ հսկան էն *սարի պես*, Վրա նստեց – մե՞ծ, ահարկու (ՀԹ, 2, 146):

բ) Անձի ներքին հատկանիշ, վիճակ արտահայտող *ՅԴԱ-ներ*:

Իմաստաբանական տեսանկյունից մեր ուսումնասիրած *ՅԴԱ-ների* մեծ մասը պատկանում են հենց իմաստային այս դաշտին:

Ընդհանրապես դարձվածքներով ավելի ցայտուն, վառ ու պատկերավոր են արտահայտվում մարդու ներաշխարհը, հոգեբանական վիճակներն ու խառնվածքը: Լեզվի դարձվածային նյութի այդ ներուճակությունը խիստ բնորոշ է *ՅԴԱ-ներին* որպես բարդ հասկացությունների արտահայտման միջոցների:

Այս դեպքում հատկանշային բովանդակությամբ *ՅԴԱ-ների* սուբյեկտը (ներգործողը) մարդն է, որը կարող է լինել ազնիվ, անազնիվ, հավատարիմ, խելացի, հիմար, միամիտ, խորամանկ, չար, բարի, հեզ, մեծամիտ, խիզախ, վախկոտ և այլն:

Այս ենթախմբի *ՅԴԱ-ները* ևս ցույց են տալիս հիմնականում հատկանշային հասկացության գնահատականի բարձր աստիճան.

հմնտ. *թռչունի պես ազատ, գիշերի պես խորհրդավոր, աղվեսի պես խորամանկ, քարի պես սառն, ձկան պես լուռ, ոզնու պես փշապատ, երեխայի պես թույլ, ժայռի նման մռայլ, գայլի նման ագահ, նորահարսի պես խոնարհ, աղավաղու նման մեղմ, Սողոմոնի նման իմաստուն, առյուծի պես քաջ* և այլն:

Հմնտ. Նա արժանավոր մարդ է, երդվում եմ, շատ խոր հմուտ գիտության գաղտնիքների մեջ, *առյուծի պես քաջ* (ՍՍ, ԻՇ, 145):

Միազագաթ *ՅԴԱ-ներից* շատերը ևս մատնանշում են անձի ներքին հատկանիշ.

հմնտ. *կրակի պես* (շատ ճարպիկ, եռանդուն), *օճառի պղպջակների պես* (խիստ դատարկամիտ), *գառնագգեստ գայլի նման* (շատ երկերեսանի), *բորենու պես* (խիստ դաժան), *ոսկու պես* (շատ բարի, ընկերասեր) և այլն: Այսօրինակ կառույցով *ՅԴԱ-ների* մի մասն էլ դրսևորում է անձի ներքին հոգեբանական վիճակի քերականական կարգի իմաստ (ածականական իմաստ).

հմնտ. *ինչպես առանց ծեռքերի* (անօգնական), *ջուրն ընկածի պես, թրջված հավի նման* (վշտաբեկ), *սև ուրբաթի պես* (1. լուռ, 2. տխուր) և այլն:

Այդպիսի *ՅԴԱ-ները* հավասարապես կարող են վերաբերել թե անձին, թե գործողությանը ցուցաբերելով խոսքիմասային տարարժեքություն⁵:

⁵ Տարածք 44 –ների մասին հանգամանորեն տե՛ս Լ. Մ. Խաչատրյան, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե. 1996, էջք 229-241:

Հմնտ. Ապառաժի նման լուռ (մարդ), ապառաժի նման լուռ (նստել), գլխին կացնի հարկած ստացածի պես (մարդ), գլխին կացնի հարկած ստացածի պես (անշարժանալ), (ած./մկբ.):

ՀԴԱ-ների միջոցով անձի բնութագիրը կարող է տրվել նաև ըստ նրա նյութական կարողության, դրության: Հմնտ. ՀԴԱ-ների հետևյալ հականշային գույզը.

Կրեսոսի նման հարուստ (ռուս. *богат как Крез*, անգլ. *as rich as Croesus*)- Հոբի պես աղքատ (ռուս. *беден как Иов*, անգլ. *as poor as Job*):

Առարկայի հատկանիշ ցույց տվող ՀԴԱ-ներ: Այդօրինակ հատկանշային ՀԴԱ-ները բնութագրում են առարկաները տարբեր տեսանկյուններից: ըստ ձևի, մեծության, համաձայն համային, գունային և որակական այլևայլ հատկանիշ-ների: Այդպիսի ՀԴԱ-ների մեծ մասին ևս բնորոշ է նրանց արտահայտած հատկանշային հասկացության սաստկական նշանակությունը:

հմնտ. քյուրեղի պես մաքուր, դառն ինչպես լեղի, արծիճի նման գորշ, թղթի պես բարակ, մեղրի պես քաղցր, մետաքսի նման փափուկ, արծաթի/փղոսկրի պես փայլուն և այլն:

Հմնտ. Շապիկը նոր էր, շատ բարձր, փղոսկրի պես փայլուն օձիքով (ՆՂ, 275):

Համեմատենք մեկ գոյականի և մեկ կապի (կապական բառի) համադրմամբ կազմված հետևյալ ՀԴԱ-ներն ու նրանց ծավալումները, որոնք ևս տարբեր առումներով են հատկանշում առարկաները.

հմնտ. դայմախի (բրբ.)/տախտակի պես (շատ հարթ, ողորկ), եղունգի չափ, մասուրի չափ, կորեկի չափ, զնդասեղի գլխի չափ, թռչունի կտուցի չափ, լուցկու տուփի չափ, ծտի աչքի չափ, ասեղի ծայրի չափ (շատ փոքր, մանր):

Հմնտ. -ես նրա մեջ ոչ թե մեծ խելք, այլ մի կոռյակի չափ խելք չեմ գտնում, տեղ իշխան (ՐԱ, 515):

Երևույթի, վերացական հասկացության բնութագիր արտահայտող ՀԴԱ-ներ: Այդ կարգի ՀԴԱ-ները կապվում են երևույթների, վերացական հասկացությունների հետ՝ դրանց նկատմամբ արտահայտելով վերաբերմունք, տալով գնահատական՝ դրսևորելով նրանց հատկանիշների գնահատականի բարձր աստիճան.

հմնտ. օրվա պես պարզ, գորդյան հանգույցի պես բարդ, օդի նման անհրաժեշտ, ջուր խմելու չափ հեշտ, մեռոնի պես սրբազան, մահու պես դժվար, կյանքի չափ քաղցր և այլն:

Հմնտ. Ա՛խ, հայրենաշունչ ձեր հորովելը Կյանքի չափ քաղցր է և սիրավետ (ՀԱ, 90):

ՀԴԱ-ների վերոհիշյալ խմբավորումը չի կարելի բացարձակացնել: Նշված խմբերի դարձվածքները կապված են միմյանց հետ.միևնույն ՀԴԱ-ն,

լինելով բազմիմաստ, կարող է դասվել միաժամանակ մի քանի իմաստալից խմբերի մեջ⁶:

Հմնտ. *ժայռի // գրանիտի // պողպատի // կոճղի // կաղնու նման // պես ամուր/դիմացկուն/պինդ/կարծր* տարբերակային ՀԴԱ-ները, որոնք կարող են արտահայտել անծի և արտաքին-ֆիզիկական, և՛ ներքին-հոգևոր հատկանիշներ.

հմնտ. Ջահել ժամանակս մեքքս *կաղնու պես պինդ* էր (ՎԱ, 136): *Կաղնու նման կարծր* նրա կամակորությունը կաղնու պես էլ բոցավառվեց (ԱՍՈ, 544):

Գիշերի պես խորհրդավոր, օվկիանի նման աննզր, սառույցի պես տառն, արևի նման պայծառ, ողնու պես փշոտ/փշապատ և մի շարք այլ ՀԴԱ-ներ խոսքաշարում հնարավորություն ունեն կապակցվելու ինչպես անծ, այնպես էլ երևույթ, վերացական հասկացություն ցույց տվող բառերի հետ.

հմնտ. Վերջապես մայրը համոզվեց, որ Ռուբիկը վատ տղա չէ, մի քիչ չարածնի է, *ողնու պես փշոտ*, սակայն՝ հոգով բարի (ԲՍ, 116): Չգու՛ն են *ողնու պես փշապատ* մտքերս (ՊՍ, 6, 198):

Կորեկի չափ, ծոփ աչքի չափ, լուցկու տուփի չափ, (շատ փոքր)- *Աշխարհի չափ, ծոփի չափ, սարի չափ* (շատ մեծ) յուրօրինակ հականշահոմանշային շարքի այս ՀԴԱ-ներով կարող են հատկանշվել և առարկաներ, և՛ երևույթներ ու վերացական հասկացություններ.

հմնտ. Հեռվից աչքին ընկան արևի տակ հուրիբացող ցորենի՝ *սարի չափ* շեղքերը (ՀԼԴԲ, 518): - Բա ո՞նց, մեծին չսողի ոտքը քարին շատ կառնի. հլա սպասի՜ր... *Սարի չափ* բեռ է վերցրել իր մեջքին, թող քաշի (ՍԽՀ, 461):

- Սարդուց դուրս եկած աղջիկ է, ո՞վ կիմանա նրա *սարի չափ* ցավը (ն.տ., 522):

Բառաիմաստային լայն կապակցելիությամբ օժտված են հատկապես գունանուն բաղադրիչով ՀԴԱ-ները⁷: «Սև» գունանունով համեմատություն-դարձվածքները կարող են առնչվել մարդու դեմքի, ձեռքերի, աչքերի, մազերի, հագուստի, ինչպես նաև կենդանիների և այլնի հետ՝ մատնանշելով նրանց չափազանց սևությունը:

⁶ Հմնտ. Л. Д. Игнатьева, Структурные и семантические свойства ФЕ с фразообразующим компонентом "как" в современном русском языке, (АКД), Л., 1976, էջ 13:

⁷ Գունանուն բաղադրիչով ՀԴԱ-ների մասին համգամանորեն տես Ս. И. Ройзензон, Сравнительные устойчивые обороты, обозначающие цвет, Сб. «ПФ», В. 1967, Л. У. խաչատրյան, Գունանուն բաղադրիչով համեմատություն-դարձվածային միավորները գրաբարում (ըստ Աստվածաշնչի), «Մխիթար Գոշ», հ.1, 4. 2003, Գունանուն բաղադրիչով համեմատություն-դարձվածային միավորներն արդի իայերենում, «Բանբեր ԵՊՀ-ի», հ.1, Ե., 1999, Դ. Ղազարյան, Գունանիշ բաղադրիչով դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում, Ե., 2004:

Հմտ. ածուխի//գիշերվա//սաթի//ծյուրի//կուպրի//ագռավի// ագռավի փետուրի պես//մրի պես սև⁸:

Բայց նրա գեղեցկության ամբողջ կախարդող հմայքը խոշոր, ածուխի պես սև աչքերի մեջ էր (ՍԽՅ, 204): Ես տեսնում էի և թափանցիկ, լուսավոր աչքերը՝ գիշերվա պես սև քիթերով, և քիթը, և շրթունքները (ՍԱ, 9, 6): Նրա՝ սաթի պես սև աչքերը կարմրել էին (ԱՇ, 2, 162): Հին, արդեն մոռուքները ծերմակող գինվորների կողքին կանգնած էին նաև երիտասարդներ՝ ծյուրի պես սև մազմոռուքով (ՍԽՄ, 558): Մեծ եղբոր գլուխը պատած էր կուպրի նման սև և կոշտ մազով (ԱԲ, 292): Մագերո ագռավի փետուրի պես սիւփ-սև - ահա Նատալիայի կերպարանքը (ԱՇ, 2, 167): Մագերո՝ սև ինչպես գիշեր, մարմինը՝ լույս մի ցերեկ (ՀՇ, 14): Մի օր նա բաիը ձեռքին այգում ջուր էր կապում, մեկ էլ տեսնում է երկու օձ՝ մինը սիրուն, չալտիկ, մյուսը՝ կուպրի պես սև (ՎԱ, 544): Բայց երբ մարդ են ուղարկում ծիու ետևից, պարզվում է, որ ագռավի պես սև հովատակ է և ոչ թե աշխետ գամբիկ (ՊԱ, 3, 189):

«Սպիտակ» («Ծերմակ») գունանունով ՀԳՄ-ներով ընդգծվում է մարդու մագերի, մաշկի, ինչպես նաև առարկայի, կենդանու, երևույթի չափազանց սպիտակությունը:

Հմտ. ծյունի//լույսի//թղթի//կաթի պես սպիտակ//ծերմակ.

Հուզմունքից դողում էր ծյունի պես ծերմակ նրա մոռուքը (ՍԽՅ, 463): Մի անգամ նա տեսավ Մաշոյին՝ ծյունի նման սպիտակ շորերով (ԱԲ, 71): Բայց ծյունի պես ծերմակ ձիուն հետևում էր այն սև ձին (ՀՇ, 90): Ողական ամբողջ շրջապատող ծառազարդ բլուրները մխում էին ծյունի պես ծերմակ գուռոշինքով (ՐՄ, 17): Լույսի պես սպիտակ դեմքին խաղում էր ժպիտ մի վերին (ԵՇ, 3, 76): Անգսպելի ցանկությամբ նա նայում էր մերթ գեղեցկուհու ուռուցիկ կոծքին, մերթ թղթի պես ծերմակ առաքանոցին (ԱՇ, 4, 88): Բայց որոնց ներսը եթե մարդ քննի, կաթի պես ծերմակ մի լառո կգտնի (ՍՄ, ԻՇ, 75):

Համեմատենք թղթի⁹ //կուտակի//քաթանի//նազաղաթի//մարմարի //կավճի//պատի ծեփի պես սպիտակ//ծերմակ//գունատ ՀԳՄ-ները, որոնք մեծ մասամբ մատնանշում են մարդու դեմքի, շրթունքների սաստիկ գունատությունը:

Հմտ. նա դժվարությամբ էր շնչում, դեմքը թղթի պես գունատ էր (ԱՇ, 2, 399): Բայց մոմե այդ գունատ գուսանի թղթի պես ծերմակ շուրթերից հորդում էր երզը հանկարծ անպրոպի, որոտի պես թափով (ԵՇ, 3, 69):

⁸ Հմտ. անգլերենի *as black as jet/midnight/coal/ink* ՀԳՄ-ները, որոնք հատկանշում են տարբեր օբյեկտներ, մագեր՝ մատնանշելով դրանց մուգ կամ կեղտոտ լինելը:

⁹ Ուշագրավ է, որ ռուսերենում *белый как парашито* ՀԳՄ-ն վերաբերում է մարդու խիստ գունատ դեմքին, իսկ հայերենում թղթի պես ծերմակ և անգլերենում *as white as a sheet* ՀԳՄ-ներն ունեն և՛ «չափազանց գունատ», և՛ «չափազանց սպիտակ» իմաստները:

«Կարմիր» գունանվանն արդի հայերենում իմաստաբանորեն հարում են մի շարք գոյականներ *արյուն, կրակ, գինի, վարդ, նուռ, մարջան, ծակնդեղ* և այլն:

Այս գունանունով ՀԴՄ-ները վերաբերում են մարդու արտաքինին (այտեր, շրթունքներ), առարկաներին, երևույթներին¹⁰:

Հմնտ. Բայց մերթընդմիջ նրա՝ *մարջանի նման կարմիր շրթունքներ* արտասանում էին այդ խոսքերը. «Ախ, որքան ազնիվ էր նա, ա՛խ, որքան սիրում էի նրան...» (ԲՄ, 472): Շապիկը նոր էր շատ բարձր օծիքով *արյան պես կարմիր փոռնաառվ* (ԵՂ, 275): Վաշինգտոնի իմ տունը չըջապատել են *նոան պես կարմիր «Սուստանգ» մեքենաներ* (ԱՀ, 9, 2, 8):

«Կանաչ», «դեղին», «կապույտ» գունանուններով կազմված համեմատություն – դարձվածքները ևս կարող են ցույց տալ անձի, առարկայի արտաքին հատկանիշներ, բնութագրել զանազան երևույթներ արտահայտելով գունային հասկացության սաստկական իմաստ:

Հմնտ. *խոտի/զմրուխտի պես կանաչ, հակինթի // մաղձի // ոսկու պես դեղին, ծովի // երկնքի// լողակի պես կապույտ*.

Ծովը: Անվերջ տարածվող ջրերի վտանգավոր այդ օրրանը: Ծովը: *Ջմրուխտի պես կանաչ*, աղտոտ *ալքեոոլ* այդ քույրը (ԿԶ, 131):

Հակինթի պես դեղին ռոռուօւնեռո դռան շրջանակից կախ տեսնելու միտք ուներ (ԲՄ, 46): Շամիլ–Բեգ– Գալիս է *նավթ*, գալիս աղբյուրի պես: Օրական վեց հազար փութ, մտիկ ես անում, քեփդ է գալիս: *Դեղին ոնց որ հալած ոսկի* (ԱՇ, 7, 75):

Որքան համառոճակ և ճշգրիտ էին դառնում իմ պատասխանները, այնքան զինվորական բլուզով ուսուցչի դեմքը պայծառաճում էր և զգվանքն ավելանում *ծովի նման կապույտ ալքեոի* մեջ (ՎԱ, 162): Խեղդամահ էր, *լեղակի պես կապույտ* իր *լեզուն* բերանից կախած (ԵԶ, 3, 66):

Այսպիսով՝

ՀԴՄ-ների իմաստաբանության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդօրինակ դարձվածքները բարդ հասկացությունների արտահայտման միջոցներ են:

Հատկանշային (ածականական) ՀԴՄ-ների մեջ ընդգրկվում են անձին, առարկային, երևույթին ու վերագական հասկացությանը վերաբերող դարձվածքներ:

¹⁰ Հմնտ. անգլերենում *as red as a fire* (հայ. *կրակի պես կարմիր*) ՀԴՄ-ով բնութագրվում է մարդու ամոթից, զայրույթից, չփոթմունքից կարմրած դեմքը, իսկ *as red as blood/rose/cherry* (հայ. *կարմիր ինչպես արյուն/կարող/կեռասը*) տարբերակային դարձվածքներով հատկանշվում են մարդու այտերը և զանազան իրեր (տես Գ. Ղազարյան, Ճշվ.աշխ., էջ 34, 66):

Ածականական ՀԴՄ-ների ներքին այդպիսի դասակարգումը հարաբերական է, այս իմաստաարժեքային տիպին պատկանող շատ ՀԴՄ-ներ կարող են ներառվել մի քանի խմբերի մեջ վերաբերելով թե անձին, թե առարկային, թե երևույթին ու վերացական հասկացությանը:

Այս տեսանկյունից հատկանշական են գունանուն բաղադրիչով ՀԴՄ-ները:

Ըստ իմաստային – քերականական հայեցակերպի ՀԴՄ-ների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու խնդրո առարկա դարձվածքների իմաստային և քերականական առանձնահատկությունների փոխադարձ կապն ու փոխադարձանավորվածությունը, ընդհանրապես արդյունավետ է դարձնում այդօրինակ կապակցություններին առնչվող իմաստաբանական խնդիրների պարզաբանումը:

ՀԱՍՆՈՒՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ - Ա. Բակունց, Երկեր, Ե., 1985:

ԱՅ - Ա. Հարությունյան, Վաշինգտոնյան գրառումներ («Գարուն», 2, 1999):

ԱՇ - Ալ. Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հ.հ.2, 4, 7, Ե., 1950-1951:

ԱՍՈ - Ա. Սեկոյան, Ոսկե վագերի մեջ, Ե., 1979:

ԲՍ - Բ. Սեյրանյան, Այն աղմկոտ գարնան, Ե., 1965:

ԵԶ - Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ.3, Ե., 1987:

ԿԶ - Կ. Չարյան, Երկեր, Ե., 1985:

ՀԹ - Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ.2, Ե., 1990:

ՀԼԴԲ - Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան (կազմեցին՝ Ա.

Սուքիասյան, Ս. Գալստյան), Ե., 1975:

ՀԸ - Հովհ. Շիրազ, Սիամանթո և խցեգարե, Ե., 1970:

ՀՍ - Հ. Սահյան, Բանաստեղծություններ, հ.1, Ե., 1967:

ՍԱ - Սիբայել Աբաջյանց, Գիշերը («Գարուն», հ.2, 1999):

ՆԴ - Նար-Դոս, Պատմվածքներ, վիպակներ, Ե., 1978:

ՊՍ - Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ.6, Ե., 1976, Երկեր, հ.3, Ե., 1983:

ՍԽՀ - Ս. Խանզադյան, Հողը, Ե., 1957:

ՍԽՄ - Ս. Խանզադյան, Մխիթար սպարապետ, Ե., 1963:

ՍՍ - Ս. Սեֆերյան, Իմաստախոս Շեքսպիրը, Ե., 1986:

ՎԱ - Վ. Անանյան, Լեռներ հայրենի, Ե., 1963:

ՐԱ - Րաֆֆի, Սամվել, Ե., 1967: